ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՍՍՏ/2020 գնման պայմանագրի

ք. Երևան «29» 10 2020թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Ֆիդանյանի, ով գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Բաբայանի, որը գործում է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 17.02.2020թ. կնքված N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՍՍՏ/2020 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը հիմք ընդունելով, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունների միաձուլման ձևով վերակազմակերպման ճանապարհով ստեղծվել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունը (ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 24-ի թիվ 1472-Ա որոշում, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020թ. մարտի 6-ի N344-Ա հրաման), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին 17.02.2020թ. կնքված N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՍՍՏ/2020 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխել Կատարողի վավերապայմանները.

1.1 «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ բառերը փոխարինել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ բառերով:

1.2 «ՀՎՀՀ 02210395» բառերը փոխարինել «ՀՎՀՀ 00219641» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀոստիկանություն	«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Նալբանդյան 130	ք.Երևան, Կոմիտաս 49/4
ՀՀՖինանսներինախարարության Աշխատակազմիգործառնականվարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/ճ
Հ/Հ 900011021947	Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 01533334	ՀՎՀՀ 00219641
Հեռ. 010 596021	Հեռ. 010 232600
Ա. Ֆիդանյան	Ա.Բաբայան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	(ստորագրություն)
(ստորագրություն)	/տնօրենի պաշտոնակատար/
Կ.Տ	Կ.Տ